

## ՍՈՎԵՏԱՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ս. ՂԱՐԻՔՅԱՆ

Հայ ժողովրդի պատմության սովետական շրջանի մոտ հիսուն տարիներում լեզվաբանական գիտությունն անցել է զարգացման առանձին փուլեր և այժմ Սովետական Միության մեջ առաջավոր հումանիտար գիտություններից մեկն է: Հայ լեզվաբանության մեջ զարգացան զանազան ուղղություններ, միաժամանակ ստեղծվեցին լեզվաբանական նոր կադրեր, որոնք պատրաստվում էին թե՛ Հայաստանում և թե՛ Սովետական Միության կենտրոնի առաջավոր լեզվաբանների աջակցությամբ: Այժմ, երբ մենք կարող ենք վերագնահատման ենթարկել մեր լեզվաբանության անցած ուղին և նրա այսօրվա արդյունքները, չենք կարող չընդգծել այն հսկայական դերը, որ ունեցան նրա զարգացման մեջ լեզվաբանության երախտավորներ Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, Գրիգոր Ղափանցյանը, Ստեփանոս Մալխասյանցը:

Հրաչյա Աճառյանը հիմնադրեց հայոց լեզվի պատմության և բարբառագիտության ամբիոնը: Նա խորը կերպով հետազոտեց հայոց լեզուն դիախրոնիկ (տարածամանակյա) կտրվածքով և ստեղծեց յոթ հատորից բաղկացած «Հայերենի արմատական բառարան»-ը: Այդ բառարանն իր կատարմամբ մի արտակարգ գործ է: Հ. Աճառյանին հատուկ էին գիտական բարձրագույն բարեխղճությունը, ասհագ տենչը դեպի ճշտությունն ու ճշմարտությունը, անասհման ծարավը նյութեր և փաստեր հավաքելու գործում և անդուլ աշխատելու առասպելական կարողությունը: Նրա այդ հատկությունները պայմանավորեցին Արմատական բառարանի ստեղծումը, որի մասին համաշխարհային հռչակվալյելող գիտնական Անտուան Մեյեն ասում է.

«Ոչ մի լեզվի համար չկա այսքան ճոխ, այսքան կատարյալ բառարան<sup>1</sup>: Այդ կարծիքը մինչև այժմ էլ համապատասխանում է իրականությանը:

Բառաբանում զետեղված են շուրջ 11 հազար արմատական բուների բառահողվածներ տարբեր շափի ու ծավալի մշակմամբ. յուրաքանչյուր բառի համար լավագույն և վստահելի աղբյուրներից բերված են վկայություններ. տրված են այդ արմատի մեկնությունը, ճյուղավորումները և պատմական փոփոխությունները, ստուգաբանությունը՝ կատարված օտար և հայ հայագետ գիտնականների կամ իր՝ Հ. Աճառյանի կողմից: Ցույց է տրված այն գրականությունը, որտեղ բանասիրական կամ ստուգաբանական առումով շոշափվել է այդ արմատը: Տրված են նաև արմատի գործածությունը, տառադարձությունը և ընդունած իմաստը բարբառներում, եթե այդտեղ նա գործածվել կամ գործածվում է: Այսպիսով, Հ. Աճառյանի Արմատական բառարանը իրոք մի հանրագիտարան է հայերեն արմատների ստուգաբանության հարցերում: Այս աշխատանքը նա կատարել է այնպիսի հմտությամբ, խորությամբ և ծավալով, որ երկար ժամանակ նրա աշակերտները և մյուս լեզվաբանները միայն

<sup>1</sup> Հայերեն արմատական բառարան, հատ. 7, էջ 205.

սովորելու, յուրացնելու ձգտում՝ զուցարեբեցին, առանց հանդգնելու հալ ստուգարանական լեզվաբանության աճառյանական գիծը վերանայելու կամ լրացնելու: Սակայն լեզվաբանության զարգացումը Սովետական Հայաստանում վերջին տարիներին ծնունդ տվեց Հ. Աճառյանի այս ուղղության հետևորդների շարանի: Ստուգարանությամբ զբաղվեցին պրոֆեսորներ Գ. Զահուկյանը, է. Աղայանը և դոցենտ Պ. Բեգիրյանը:

Ընդ Արմատական բառարանի հիման վրա հանգուցյալ ակադեմիկոս Հ. Ա. Աճառյանը գրեց «Հայոց լեզվի պատմության» երկու հատորները: Առաջին անգամ լինելով՝ Հ. Աճառյանը ուրվագծեց հայոց լեզվի զարգացումը գրաբարից մինչև մեր օրերը: Նրա «Հայոց լեզվի պատմությունը» ընդգրկում է հայ բառագիտության և գրական լեզվի պատմական զարգացումը: Այս աշխատության մեջ նա համառոտակի շարադրում է նաև հայոց լեզվի պատմական քերականության հարցերը: Հ. Աճառյանի այդ երկհատորյակը անդուզական ձևով նարկ է հայոց լեզվի պատմության հարցերին ծանոթանալու համար: Հ. Աճառյանի ստեղծած ուղղությունը ունեցավ մի շարք աշակերտներ և հետևորդներ: Հանգուցյալ պրոֆեսոր Ս. Ղ. Ղաղարյանը գրեց հայոց լեզվի պատմության ուրվագիծ՝ ավելի ընդարձակելով պատմական քերականության հարցերը հայոց լեզվի պատմության մեջ: Մի առանձին հատոր նվիրեց նա միջին հայերենին՝ Վաղահաս մահը խանգարեց նրան ավարտելու հայոց լեզվի պատմության լրիվ դասընթացը:

Պրոֆեսոր Գ. Զահուկյանը գրեց հայոց լեզվի քերականության պատմությունը<sup>3</sup>, մանրամասն ցույց տալով, թե ինչպես են սկզբնավորվել, զարգացել ու հասունացել հայերենի քերականության համակարգերը և ըմբռնումները: Աշխարհարար լեզվի պատմության հարցերում յուրահատուկ մոտեցմամբ ուշագրավ մի աշխատություն հրատարակեց պրոֆ. Գ. Սևակը<sup>4</sup>: է. Աղայանը հրատարակեց գրաբարի հնչյունաբանության սինխրոնիկ հետազոտությունը<sup>5</sup>: Եվ այսպես՝ Հրաչյա Աճառյանի այդ աշխատությունը ծավալվեց, դարձավ մի ինքնուրույն բնագավառ՝ բազմաթիվ շնորհալի ներկայացուցիչներով և հետևորդներով: Ընդհանուր է, որ այդ հետևորդները ամբողջությամբ չեն կրկնում Հ. Աճառյանի ո՛չ մեթոդը, ո՛չ էլ տեսակետները: Հենց Հ. Աճառյանի ուղղության զարգացումն էլ այն է, որ նրա հետևորդները հայոց լեզվի պատմության հարցերը քննում են լեզվաբանական նոր նվաճումների, նոր ուղղությունների սկզբունքներով, բայց նրա կատարած մեծ ծառայությունն այդ բնագավառում երբևք վիճելի չի լինի, չի և չի լինի:

Հ. Աճառյանը պետական համալսարանում հիմնադրեց հայագիտական մի նոր գիսցիպլին՝ հայ բարբառագիտություն: Դեռ հեղափոխությունից առաջ շատերը այս կամ այն չափով զբաղվել են հայ բարբառներով, բայց դրանց մեջ ամենամեծ գործը կատարել էր ինքը՝ Հ. Աճառյանը: Նա, հայտնագործելով

2 Ս. Ղ. Ղաղարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, 1961, 535 էջ, Միջին հայերեն, գիրք 1, 1960, 304 էջ:

3 Գ. Բ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, 1954, 396 էջ:

4 Գ. Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, 1948, 275 էջ: Աշխարհարարի պատմության և նվիրված նաև Ս. Ա. Գալստյանի «Ակնարկներ աշխարհարարի պատմության» գիրքը, 1963, 131 էջ:

5 է. Աղայան, Գրաբարի քերականություն, գիրք 1, Հնչյունաբանություն, 1964, 262 էջ:

շուրջ տասնութ բարբառներ, 13 հայտնի բարբառների հետ միասին, կազմել է իր «Հայ բարբառագիտություն» աշխատությունը, հրատարակված 1911 թ. «Էմինյան ազգագրական ժողովածու» շարքի հատորում:

Առաջին անգամ Հրաշյա Աճառյանը սկսեց գասավանդել հայ բարբառագիտության բուհական դասընթացը Երևանի համալսարանում, միաժամանակ հարունակելով ուսումնասիրել, մենագրական հետազոտության ենթարկել հայերենի բարբառները: Նա սովետական շրջանում հրատարակեց 8 մենագրական ուսումնասիրություններ՝ նվիրված Պոլսի, Վանի, Համշենի, Մարաղայի, Ագուլիսի, Նոր-Նախիջևանի, Արտիալի (միջին Եվրոպայի), Նոր-Ջուղայի բարբառներին: Բողել է նաև Կիլիկիայի և Սուրիայի բարբառների ուսումնասիրություններ, որոնք դեռևս չեն հրատարակված: Հ. Աճառյանի այդ ուղղությունը լայն ծավալ ստացավ վերջին տասնամյակներում: Հայտնագործվեցին շուրջ 29 անձանոթ բարբառներ, որոնցից երեքը Նորից Հ. Աճառյանի կողմից: Գրվեցին մենագրական հետազոտություններ, որոնց թիվն անցնում է տասից: Ուսումնասիրվեցին և հրատարակվեցին Մեղրու (է. Աղայան), Կեսարիայի (Ս. Անթոսյան), Կարճևանի (Հ. Մուրադյան), Մշո (Ս. Բալդասարյան), Կոզենի (Ռ. Բաղրամյան), Շատախի (Մ. Մուրադյան), Սասունի (Վ. Պետոյան), Կարնո (Հ. Մկրտչյան) բարբառների մենագրական հետազոտությունները: Գրվեցին և կազմվեցին Շամախու և Դերսիմի (Ռ. Բաղրամյան) և Ղարաբաղի (Կ. Դավթյան) շրջանների բարբառային բարտեղներ: Այդ բոլորը Հ. Աճառյանի ոճով իրականացված արժեքավոր հետազոտություններ են: Դրանց մեջ նշելի է Ղարաբաղի բարբառային բարտեղի կազմումն ու հետազոտությունը, որը իրականացրել է Կ. Դավթյանը: Մեր կարծիքով, հայ բարբառագիտության հետագա նպատակը պետք է լինի հետազոտել և հրատարակել մեծ տերիտորիա գրավող այլ բարբառների ուսումնասիրությունն ու բարտեղը:

Նոր բարբառների հետազոտման գործում մեծ դեր խաղաց հայ բարբառների գիտական դասակարգման սկզբունքի հայտնագործումը, որ կատարել էր նախահեղուփոխական շրջանում նույն ինքն Հ. Աճառյանը<sup>6</sup>:

Հ. Աճառյանը, իբրև դասակարգման սկզբունք, վերցրել էր բարբառների ներկայի կազմությունը: Այդ հանգամանքը հնարավորություն է տալիս հեշտությամբ որոշելու բարբառի տեղը և խումբը և, երբ բարբառն ունենում է անպիսի ձև, որ չի գտնվում գիտությանը հայտնի խմբերում, ինքնին թելադրվում է որոնել բարբառների մի նոր խումբ: Այդ եղանակով հայտնագործվեցին բարբառների 4 նոր ճյուղեր (Ա, Կա, Հա և գրաբարակերպ): Այդ նոր ճյուղերից Ա ճյուղին պատկանում են 10 բարբառ, որոնցից հայտնի էր միայն մեկը (Արդվինի բարբառը, մյուս ինը նոր են հայտնաբերված), Կա ճյուղին՝ 6 բարբառ, Հա ճյուղին՝ 3 բարբառ և գրաբարակերպ ճյուղին՝ 2 բարբառ: Այս նոր ճյուղերի բարբառները երևան բերեցին այնպիսի հատկություններ, որոնք հայտնի չէին նախորդ բարբառներից (ճյուղերից): Պարզվեց, որ մեր բարբառների մի մասը շունեն անցյալ կատարյալը և փոխարենը գործ են ածում վաղակատար ժամանակը: Որոշ բարբառներ վաղակատար-հարակատար ժամանակների փոխարեն գործ են ածում հարակատար ժամանակը, երբեմն նույնիսկ առանց օժանդակ բայի: Որոշ բարբառներ օժանդակ բայի անցյալ ձևեր չունեն, ուստի բայի այդ ձևերը կազմվում են ներկայի ձևերից և որն է

<sup>6</sup> Classification des dialectes arméniens par Adjarian, Paris, 1909.

բառ-մասնիկից. որ արտահայտում է անցյալի գաղափար (նէլ, նիս, լալ, լէ, էր և նմանները). մի շարք բարբառներ բացառական հոլովը կազմում են վերլուծական ձևով (հինից, նրէստա, անա և նմ.); կան բարբառներ էլ, որոնք ունեն գրական լեզվին և մյուս բարբառներին անհայտ դերբայական ձևեր:

Հ. Աճառյանի դասակարգման սկզբունքն ապրեց իր զարգացումը: Պարզ-վեց, որ մեր բարբառները կազմում են երեք հիմնական խմբեր: Առաջինը կոչվեց դերբայավոր խումբ, բաղկացած բարբառների երեք ճյուղերից, որոնք ներկան կազմում են դերբայով և օժանդակ բայով (Ում, Ս և Լ ճյուղերի բարբառները), մասնիկավոր խումբ՝ բաղկացած երեք ճյուղերից, որոնք իրենց ներկան կազմում են գրաբար ներկայի վրա մասնիկ ավելացնելով (Կը, Կա, Հա ճյուղերի բարբառները), և գրաբարակերպ խումբ, որ միայն 2 բարբառից է կազմված:

Հետազոտման ենթարկվեց բարբառների հնչյունական կազմը: Պարզ-վեց, որ պայթուկական բաղաձայնների համակարգերը բարբառներում ներկայացնում են յոթ խումբ, որոնք աստղասփյուռների նման բռնում են պատմական Հայաստանի ամբողջ տերիտորիան, ըստ որում նկատվում է, որ դրանցից շորսն ընդգրկում են այն տերիտորիան, որ բռնում է Փոքր Հայքից մինչև Ղարաբաղը ներառյալ: Փոքր Հայքի բարբառների բաղաձայնական համակարգը ամենամոտն է հնդեվրոպական բաղաձայնական համակարգին (բհ—բ—պ). Նրանից դեպի արևելք ընկած Կենտրոնական Հայաստանի բարբառների բաղաձայնական համակարգը Փոքր Հայքից տարբերվում է միայն հնդեվրոպական պարզ ձայնեղների խլացմամբ (բհ—պ փ), այսինքն միայն մի հատկանիշով: Նրանից արևելք գտնվող Արաքսի միջին հոսանքի բարբառները տարբերվում են Կենտրոնական Հայաստանի բարբառներից միայն մի հատկությամբ՝ հնդեվրոպական շնչեղ ձայնեղները վերածում են պարզ ձայնեղների (—բ պ փ): Այստեղ կատարվում է մի լրիվ տեղաշարժ հնդեվրոպական բաղաձայնական համակարգի համեմատությամբ:

Հնդեվրոպական            bh   b   p   ph(?)  
Հայկական                    —   բ   պ   փ

Այդ մարդից արևելք գտնվող Ղարաբաղում և այլ շրջաններում նույնպես կատարվում է մի փոփոխություն՝ ձայնեղները վերածվում են խուլերի (-պ փ): Այստեղ արդեն պարզ ձայնեղի վերածված հ. ե. շնչեղ ձայնեղները խլանում են, և Հայաստանի արևելքի բոլոր բարբառներում (Սյունիք, Արցախ, Ատրպատական, Վան) ստացվում է երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական համակարգ.

—պ   փ  
—տ   թ  
—կ   ք

Այսպիսով, արևմուտքից արևելք գնալով հայոց լեզվի բարբառների բաղաձայնական համակարգն աստիճանաբար կորցնում է հնդեվրոպական բաղաձայնական համակարգի մի հիմնական հատկությունը՝ երկշարք ձայնեղությունը:

Այսպիսի օրինաչափությունը չի կարող լինել պատահական, անպայման մեր բարբառների պատմության մեջ, ինչպես և մեր ժողովրդի պատմության մեջ, այդ երևույթը մեծ իրադարձության վկայություն է:

Հայ բարբառների բաղաձայնական համակարգի պրոբլեմը «Вопросы ЯЗЫКОЗНАНИЯ» ամսագրի էջերում դարձավ միջազգային բանավեճի առարկա, որը տևեց 1959 թվականից մինչև 1962 թվականը<sup>7</sup>: Այդ փաստը և մեր սովետահայ լեզվաբանների մի շարք աշխատություններ վկայում են, որ Սովետական Հայաստանի հայ լեզվաբանությունն այժմ ի վիճակի է դուրս գալու միջազգային հրապարակ:

Հ. Աճառյանը գրել է մի ընդարձակ աշխատություն ևս, որը վերնագրել է «Հայերենի լիակատար քերականություն 562 լեզուների համեմատությամբ»:

Այս աշխատությունից հրատարակվել է առայժմ 5 հատոր (մեկ հատորը 2 մասով):

Այստեղ նա տալիս է 562 լեզուների քերականության նկարագրությունը՝ դասակարգված պատմա-համեմատական լեզվաբանության բոլոր սկզբունքներով: Այս աշխատանքը գրելու համար միայն օգտագործած գրականությունը ընթերցողի մեջ առաջացնում է զարմանք ու հիացմունք: Աշխատության մեջ էականը հայոց լեզվի համեմատական և պատմական քերականությունն է: Նախահնդափոխական շրջանում հայոց լեզվի համեմատական և պատմական քերականության վերաբերյալ կան մի շարք աշխատություններ, որոնց մեջ հիշատակելի են Ա. Մելիի «Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique», 1936, II հրատարակութ. և Կարստի «Historische Grammatik des Kilikisch-Armenischen» (Strasburg, 1901) ուսումնասիրությունները: Սակայն այն, ինչ որ արել է Հ. Աճառյանը, գերազանցում է իր բոլոր նախորդներին:

Հ. Աճառյանն այս ասպարեզում ևս ունեցավ հետևորդներ: Այդ ուղղույթում շարունակում է Գ. Զահուկյանը, որը հրատարակել է երկու ծավալուն աշխատություններ<sup>8</sup>: Պատմական քերականության է նվիրված նաև Ք. Ա. Ղարապյուլյանի «Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը» (1961 թ., 182 էջ):

Հ. Աճառյանը ստեղծեց նաև «Հայկակեսն անձնանունների բառարանի» 5 հատորյակը: Բառարան լինելուց բացի այդ աշխատությունը հայ բանասիրության և պատմության համար լավագույն մատենագիտական աղբյուր է:

Այսպիսով, լեզվաբանության մեր մեծագույն ներկայացուցիչներից մեկը՝ Հ. Աճառյանը ստեղծեց Սովետական Հայաստանի լեզվաբանության մի շարք ուղղություններ, դրանք ներկայացնող լավագույն գործեր և հետևորդների ու աշակերտների բանակ, որը շարունակում է նոր փուլում զարգացնել նրա հիմնադրած ուղղությունները:

<sup>7</sup> Տե՛ս Вопросы языкознания, 1959, № 5, 6; 1960, № 4, 5, 6; 1961, № 3, 4, 5; 1962, № 1, 2, 5.

<sup>8</sup> Գ. Բ. Զահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, 1959 թ.: Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967 г. Ձեռագծ Սովետական Հայաստանում մշտական բնակություն չեն ունեցել, բայց Սովետական Հայաստանի լեզվաբանության գործին են նպաստել հանգուցյալ պրոֆ. Հ. Կ. Կուսիկյանը և բանասիրական գիտությունների թեկնածու է. Ե. Քումանյանը իրենց հոդվածներով և ներթուփող աշխատություններով. И. К. Кусикян, Очерки исторического синтаксиса литературного армянского языка, 1959 г.; Его же: Изменения в словарном составе литературного армянского языка. Э. Г. Туманян, Артикли в современном армянском языке, Ереван, 1963 г.

Սովետական Հայաստանի լեզվաբանությունը ստեղծելու գործում երկրորդ մեծ երախտավորը հանգուցյալ ակադեմիկոս Մանուկ Աբեղյանն է: Ինք նախասովետական շրջանում նրա հետաքրքրության օտարկան եղել են ժամանակակից հայերենի տեսական և գործնական խնդիրները: Նրա հետազոտությունները իսկությամբ ստեղծեցին սինխրոնիկ լեզվաբանության ուղղությունները Հայաստանում: 1912 թ. հրապարակվեց նրա «Հայերենի շարահյուսություն» իսկ 1931 թ. «Հայոց լեզվի տեսություն» ֆունդամենտալ աշխատությունները: Այս ուսումնասիրությունները Սովետական Հայաստանում սկիզբ դրեցին հայերենի շարահյուսության ուսումնասիրության ուղղությանը: Ելակետ ընդունելով Մ. Աբեղյանի շարահյուսության մեջ արժարժված սկզբունքները, Սովետական Հայաստանի լեզվաբանները, նրա հետևորդներն ու աշակերտները մշակեցին հայերենի շարահյուսության, ձևաբանության և բառագիտության խնդիրներ: Այդ բնագավառում հողվածներ ու հետազոտություններ են հրապարակել մի շարք երիտասարդ հետազոտողներ: Առանձնապես պետք է նշել բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Առաքելյանի «Հայերենի շարահյուսությունը» երկհատոր աշխատությունը (հատ. 1, 1958, 504 էջ, հատ. 2, 1964, 466 էջ): Այդ աշխատության մեջ հեղինակը ոչ միայն հիմնավորել և յուրովի մեկնաբանել է շարահյուսական այն կարգերը, որոնք սահմանել է Մ. Աբեղյանը, այլև հայտնաբերել է բազմաթիվ նոր կարգեր և կամ հայտնաբերած կարգերի բազմաթիվ մանրամասնություններ:

Մ. Աբեղյանն ուներ նախադասության կառուցվածքի յուրատիպ ըմբռնում, որը ելնում էր այն սկզբունքից, թե նախադասության ելակետային առանցքը ստորոգումն է: Երա պատմա-համեմատական լեզվաբանության հոգեբանական ուղղության հիմնաբարն էր: Եվ քանի որ ստորոգումը դրսևորվում է դիմավոր բայով, ուստի նախադասության գլխավոր անդամ նա համարում էլ դիմավոր բայը, մյուս բոլոր անդամները համարելով բայի լրացումներ ըստ նշանակության և ըստ պաշտոնի:

1934 թվականին հրապարակված Սովետական առաջին դպրոցական բերականությունը նախադասության գլխավոր անդամներ համարեց ենթական ու ստորոգյալը՝ մերժելով հոգեբանական դպրոցի ստորոգության դրույթը, սակայն նա ընդունեց Մ. Աբեղյանի շարահյուսական կարգերի և ըմբռնումների բոլոր մեկնաբանությունները՝ իսկությամբ աշակերտելով նրան: Այդ դասագիրքը կազմված է 1932—33 թվականների ծրագրերի հիման վրա, որի ակտիվ մասնակիցներից էր պրոֆեսոր Գ. Սևակը, որը և դարձավ սովետական շրջանի հայոց լեզվի շարահյուսության առաջին հեղինակը:

Պրոֆ. Գ. Սևակը, 1936 թվականին կազմելով դպրոցական շարահյուսության դասագիրքը, նոր ըմբռնումներով և մատչելի շարադրանքով հայոց լեզվի շարահյուսությունը դարձրեց հազարավորների սեփականություն:

«Հայոց լեզվի տեսություն» մեջ Աբեղյանը շափազանց մանրամասնությամբ և գիտական բարձր մակարդակով ուսումնասիրեց հայոց լեզվի բառակազմությունը. այստեղ նա շոշափեց նաև ձևաբանության կարգերի հարցերը:

Այդ աշխատությունը սկզբնավորեց հայոց լեզվի տեսության ուղղությունը: Նրա ազդեցությամբ հղացան տեսական բազմաթիվ նոր գաղափարներ, մոտեցումներ և ժամանակակից հայոց լեզվի շուրջը գրվեցին լուրջ հետազոտական աշխատություններ: Դրանցից առաջինը պետք է համարել Գ. Սևակի «Խոսքի մասերի ուսմունքը» (1939 թ.), որը տեսականորեն հիմնավորում.

սահմանում և մեկնաբանում էր հայերենի խոսքի մասերի կարգերը: Դրան հաջորդեց նույն հեղինակի «Ժամանակակից հայոց լեզվի տեսությունը» (1939 և 1947 թթ.), որը ամբողջական բուհական դասընթաց էր, բայց միաժամանակ հայոց լեզվի տեսության լուրջ և նշանակալից հետազոտություն<sup>9</sup>:

Այլ ուսումնասիրությունը, Մ. Արեղյանի աշխատությունից հետո, ամենամեծ ազդեցություն ունեցավ հայոց լեզվի հարցերը մշակելու և ձևավորելու գործում:

Պրոֆեսոր Վ. Առաքելյանը մշակեց հայերենի հնչյունաբանությունը<sup>10</sup> և հոլովների ու հոլովական կապակցությունների իմաստային առումները<sup>11</sup>: Հայերենի ոճաբանության է նվիրված Դ. Վահանյանի «Հայոց լեզվի ոճաբանության ձևաբանությունը»-ը (1956 թ., 202 էջ): Լուրջ աշխատություններ հրատարակեց Աշոտ Արրահամյանը: Նրա առաջին հետազոտությունը նվիրված է հայերենի դերբայներին: Չափազանց մանրակրկիտ և հարուստ փաստական տվյալներով հեղինակը ներկայացրեց հայոց լեզվի դերբայները՝ նրանց ծագմամբ և կազմության և քերականական ֆունկցիաներով: Պրոֆեսոր Աշոտ Արրահամյանի մյուս աշխատությունը կրում է «Բայը ժամանակակից հայերենում» (1962, 729 էջ) վերնագիրը: Աշխատությունը բաղկացած է երկու մասից, որոնցից լույս է տեսել առաջին մասը՝ մի ընդարձակածավալ աշխատություն, որը, մեր կարծիքով, թե իր կատարմամբ, թե իր խորությամբ, թե իր ներբյուրամբ առաջին հավասարը շունի հայոց լեզվի հետազոտությունների մեջ: Այս աշխատության մեջ հեղինակը շարադրել է բայի կառուցվածքային առանձնահատկությունները:

Ինչպես Աշոտ Արրահամյանը, այնպես էլ շատ այլ գիտնականներ իսկութայամբ Մ. Արեղյանի աշակերտներն են, թեև Մ. Արեղյանի կարծիքներում և տեսական հարակցություններում մտցնում են բազմաթիվ շտկումներ կամ վարձագանում նյա անցողակի արտահայտած մտքերն ու գաղափարները: Այդ ուղղությամբ անվիճելի ծառայություն ունի նաև բանասիրական գիտությունների գոկոոր Սերգեյ Արրահամյանը: Նա «Արդի հայերենի դերանունները» աշխատության մեջ զարգացրեց ժամանակակից հայերենի դերանունների ուսմունքը: Հենվելով ժամանակակից հայերենի գրական փաստերի վրա՝ Ս. Արրահամյանը երևան բերեց այնպիսի հատկանիշներ, որոնք ուրիշների կողմից չէին նկատված: Խոր և լուրջ հետազոտություններ են նրա «Ժամանակակից հայերենի շփեթվող խոսքի մասերը» (1959 թ., 263 էջ) և «Չթեթվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում» (1965 թ., 567 էջ) վերնագրերը կրող աշխատությունները: Հեղինակը, ղգտագործելով դասական լեզվաբանական գիտության վերջին նվաճումները, վճռում է խոսքի մասերի տեսության կարևոր պրոբլեմներ և այնուհետև այդ տեսակետից հետազոտում շփեթվող խոսքի մասերը ժամանակակից հայերենում:

<sup>9</sup> Տե՛ս նաև Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:

<sup>10</sup> Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն:

<sup>11</sup> Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957: Տե՛ս նաև Հ. Զ. Պետրոսյան, Որոշյալի ու անորոշի, անձի և իրի առումները հայերենում, Երևան, 1960:

լեզվաբանական շատ կարևոր երևույթ կարելի է համարել Ալեքսանդր Մարգարյանի «Հայերենի հարադիր բայերը» աշխատությունը<sup>12</sup>։ Նա ևս նախորդների նման աշակերտում է Մ. Աբեղյանին, սակայն հայ քերականության նահապետի շատ համառոտ և անցողակի արտահայտած դրույթները դարձնում է խորհետազոտության նյութ և ստանում շոշափելի արդյունքներ։ Ինքնուրույն մոտեցմամբ և անհաշիվ գրական փաստերով հեղինակը դասակարգում է հայերենի հարադիր բայերը, սահմանում նրանց կարգերը, բնութագրում յուրաքանչյուր կարգի գիտական առանձնահատկությունները և փաստերով հիմնավորում իր եզրակացությունները։ Կարելի է ասել, որ այդ աշխատությունը ևս առաջիկա տասնամյակներում մնալու է այդ թեմային նվիրվելիք լավագույն աշխատություններից մեկը։

Բայերին նվիրված աշխատություն ունի մի այլ հեղինակ՝ Հովհաննես Բարսեղյանը, որ հրատարակել է «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսությունը» (1953 թ., 424 էջ) վերնադիրը կրող մի հետազոտություն։ Այդ հեղինակը բայերի հարցում չի հետևում, այլ հակադրվում է Մ. Աբեղյանի բայական կառուցվածքի ըմբռնումներին և յուրատեսակ մոտեցում հուցսբերում, որ ինքնին ուշագրավ է։ Հայերենի ժամանակակից հարցերի ուսումնասիրությանն են նվիրված բանասիրական գիտ. հանգուցյալ դոկտոր Ա. Մուրվալյանի մի շարք փաստաւշատ և հանգամանալից մեկնազոտություններ, որոնց մեջ հատկապես նշելի են «Հայոց լեզվի բառային կազմը» (1955 թ., 436 էջ), «Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն» (1959 թ., 252 էջ)։ Մանրամասն հետազոտություն է հրատարակել Սեդա էլոյանը «Ածանցները ժամանակակից հայերենում» (1963 թ., 242 էջ)։ Ժամանակակից հայերենի բառային կազմին, քերականության հարցերին նվիրված են բազմաթիվ հոդվածներ, առանձին հրատարակություններ և կուրելի է ասել, որ Մ. Աբեղյանի ստեղծած հայերենի սինխրոնիկ ուսումնասիրության ուղղությունը տվեց հսկայական արդյունքներ։ Իհարկե, դեռ կան չլուծված հարցեր, մեր լեզվի առանձին բնագավառներ, որոնք արժանի են հատուկ ուսումնասիրության։

Այժմ արտասահմանում և Սովետական Միության մեջ ստեղծվել է կառուցվածքային լեզվաբանական ուղղություն։ Այդ լեզվաբանությունը բավական առաջ է գնացել, ունի նվաճումներ, արժեքավոր եզրահանգումներ և հետազոտման նոր, արդյունավետ մեթոդներ։ Այդ ուղղությունը առայժմ մեզ մոտ թույլ է ներկայացված։ Հրատարակված է պրոֆեսոր է. Աղայանի «Հայերենի հոլովումն ու խոնարհումը» աշխատությունը և մի շարք հոդվածներ<sup>13</sup>, ուր փորձ է արվում կիրառելու կառուցվածքային լեզվաբանության մեթոդները։

Հայաստանում լուրջ աշխատանքներ են տարվում մաթեմատիկական լեզվաբանության ուղղությամբ։ Ստացված են առաջին դրական արդյունքները։ Փորձեր են արվում զբաղվելու վիճակագրական լեզվաբանությամբ, կատար-

12 Ա. Ս. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966։ Նախքան այդ աշխատությունը, Ա. Մարգարյանը բազմաթիվ հոդվածների հետ միասին հրատարակել է նաև հետևյալ մեկնազոտությունները. ա) Մ. Նալբանդյանի լեզվագիտական գործունեությունը (1957), բ) Արովյանը և աշխարհարարը (1958), գ) Արդի հայերենի կապերը (1955)։ Տե՛ս նաև X. C. Саркисян, Микаел Налбандян и вопросы языка, Ереван, 1951.

13 է. Բ. Աղայան, Չեքոսլովակյան կառուցվածքը ժամանակակից հայերենում, «Պատմաբանասիրական հանգես», 1963, № 3, Բառակազմությունը ժամանակակից հայերենում, ն. տ. 1963, № 5,

վում են ժամանակակից հայերենի հնչյունաբանության էքսպերիմենտալ ուսումնասիրություններ (Ա. Արամյան, Վ. Հայրապետյան, Ա. Խաչատրյան): Այդ ամենը, սակայն, դործի սկիզբն է և պետք է հուսալ, որ այդ նոր ուղղությունները գնալով ավելի կժտվալվեն:

Հայ լեզվաբանության երրորդ երախտաւորը հանգուցյալ ակադեմիկոս Գրիգոր Ղափանցյանն է: Նա Հայաստանում սկզբնավորեց ընդհանուր լեզվաբանությունն իբրև առանձին գիտություն: Նրա առաջին գիրքը «Ընդհանուր լեզվաբանություն» (1939 թ., 355 էջ) հանդիսանում է ավանգական լեզվաբանության ինքնուրույն շարադրանքը, որի մեջ հեղինակը ընդհանուր լեզվաբանության հարցերի մեկնաբանության մեջ ցուցաբերում է ստեղծագործական մոտեցում: Իրկար ժամանակ այս յախատությունը եղավ մեր բուհական ուսանողության միակ ձեռնարկը: Ե. Ղափանցյանին հաջորգեց պրոֆեսոր էզվարդ Աղայանը, որն այժմ ընդհանուր լեզվաբանության անմրցակից ներկայացուցիչն է Հայաստանում: Դեռ Գ. Ղափանցյանի կենդանության ժամանակ նա կազմեց ընդհանուր լեզվաբանության ձեռնարկ բուհերի համար՝ որդեգրելով Շորի և Չեմոդանովի ուղղությունը<sup>14</sup>, Պրոֆեսոր էզ. Աղայանի բուհական այս ձեռնարկը ունեցել է մի քանի հրատարակություններ<sup>15</sup>, ընդ որում հետագա հրատարակությունների մեջ արդեն նա վերականգնեց պատմա-համեմատական լեզվաբանության բոլոր սկզբունքները<sup>16</sup>: Աշակերտելով միաժամանակ Հ. Աճառյանին, որի ընդհանուր լեզվաբանությունը վերաբերող հատորը լույս տեսավ 1955 թվականին<sup>17</sup>, պրոֆեսոր է. Աղայանը օգտագործեց այդ մեծ գիտնականի անվիճելի նվաճումները ընդհանուր լեզվաբանության հարցերում:

Իր գրքի հաջորդ հրատարակություններում հեղինակը վերամշակում էր այն՝ նոր ու նոր ասպեկտներով, միշտ արձագանքելով լեզվաբանական գիտության զարգացման նոր փուլերին: Մեր լեզվաբանական գիտության հասունացման ցուցանիշը հանդիսացավ պրոֆ. Ե. Զահուկյանի «Լեզվաբանության պատմություն» երկհատոր աշխատությունը (հատ. 1, 1960 թ., 635 էջ, հատ. 2, 1962 թ., 602 էջ):

Ակադեմիկոս Գ. Ղափանցյանը հետազոտում էր ուրարտերեն լեզուն և գրեց «Ուրարտուի պատմությունը» (1940 թ., 242 էջ) ծավալուն աշխատությունը: Այդ ուղղությունը Հայաստանում զարգացավ և ունեցավ նոր ներկայացուցիչներ: Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անգամ Բորիս Պիոտրովսկին հրապարակեց Ուրարտուին նվիրված լուրջ հետազոտություններ:

Ղեկավարելով Կարմիր բլուրի պեղումները, նա շատ նորություններ հայտնաբերեց ուրարտական մշակույթի, պետականության և լեզվի շուրջը: Ուրարտական լեզվի ուսումնասիրման գործում զգալի հաջողություններ ձեռք բերեց Նիկոլայ Հարությունյանը, որի բազմաթիվ աշխատությունները նվիր-

14 է. Բ. Աղայան, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Երևան, 1947:

15 է. Բ. Աղայան, Լեզվաբանական ներածություն ըստ լեզվի նոր ուսմունքի, Երևան, 1949:

16 է. Բ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1952 (երկրորդ վերամշակում՝ 1963):

17 Հ. Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների: Ներածություն, Երևան, 1955:

ված են ուրարտական արձանագրությունների և նրանց լեզվի մեկնաբանություններ<sup>18</sup>։ Գ. Ղափանցյանին աշակերտելով, Մ. Իսրայելյանը հրատարակեց մի շարք հետազոտություններ ուրարտական արձանագրությունների և առանձին բառերի վերծանման շուրջը։

Վերջին տարիներին պրոֆեսոր Գ. Զահուկյանը լուրջ փորձ արավ նոր մոտեցում մշակելու ուրարտերեն լեզվի նկատմամբ<sup>19</sup>։ Նա իր աշխատության մեջ փորձեց ապացուցել, որ ուրարտերեն լեզուն պատկանում է հնդեվրոպական ընտանիքին։ Այսպիսով ուրարտագիտությունը Գ. Ղափանցյանի ոգեշնչմամբ մեր երկրում նույնպես դարձավ ծավալուն գիտություն։

Պրոֆեսոր Գ. Ղափանցյանը զբաղվում էր հայերենի և խեթա-խուրրիտական լեզուների, ինչպես և ազիանիկ լեզուների կապակցության և հարաբերակցության հարցերով<sup>20</sup>։ Այդ ուղղությամբ նա կատարել է մի շարք ստուգաբանություններ, ցուցահանել աշխարհայացքային, աշխարհըմբռնման և այլ նմանություններ և դրսևորումներ։ Անկասկած, մեր ժողովրդի և լեզվի պատմության համար դա շատ կարևոր բնագավառ է։ Լեզվաբանական ժամանակակից ուղղությունները դրան բիշ նշանակություն են տալիս, սակայն որքան ժողովուրդը զարգանում և կուլտուրականանում է, այնքան նրան ավելի շատ են հետաքրքրում իր անցյալի, իր ծագման, լեզվի ծագման պրոբլեմները, ինչպես և իր էթնիկական և սոցիալական կյանքի պատմության հարցերը։ Այս հարցերին Դ. Ղափանցյանն ուներ ավելի լուրջ և խոր մոտեցում, քան մեր որոշ գիտնականներ։ Մի շարք նմանություններ գտնելով հայերենի և փոքրասիական (ազիանիկ) լեզուների միջև՝ Գ. Ղափանցյանը հանգեց հայոց լեզվի ազիանիկ ծագման տեսության։ Այդ ժամանակ այդ տեսության դեմ առարկություններ էղան, քանի որ իշխում էր այն տեսակետը, թե ազիանիկ լեզուների տեսությունը սխալ է։ Այժմ գիտությունը հակված է ընդունելու, որ փոքրասիական լեզուների մեծագույն մասը, խեթերենի հետ միասին, հնդեվրոպական ծագում ունի։ Նման պարագայում Գ. Ղափանցյանի այս տեսակետը պետք է դրականորեն վերագնահատել։ Դժբախտաբար մենք այդ ուղղությամբ հետազոտողներ չունենցանք։ Առայժմ ունենք միայն մեկ խեթագետ՝ բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Խաչատրյանը, որը հրապարակեց նորահայտ խեթական տեքստերի վերծանությունը։

Մեր լեզվաբանության շրջորդ մեծ ներկայացուցիչը Ստեփանոս Մալխասյանցն է։ Նա սկզբներում հանդես է եկել իբրև բանասեր, բայց իր «Գրաբարի համաձայնությունը» աշխատությամբ ապացուցեց, որ ինքը հավասարապես և ներհուն լեզվաբան է։ Սոցիալական շրջանում Ս. Մալխասյանցը կազմեց և հրատարակեց իր «Հայերենի բացատրական բառարան» բառահատոր աշխատությունը։ Հիրավի դա աշխատանքային մեծ սխրագործություն էր, որով հետև նա այս գործն սկսել էր վաթսուներե անց տարիքում և դրա վրա աշխատել չույ՛ 20 տարի։ Բառարանը հրատարակվել է 1944—46 թվականներին և, կարելի է տեսնել, հայ բառարանագրության մեջ 2-րդ խոշոր գործն է (Հայկազյանի կրկնատոր բառարանից հետո, որը լույս է տեսել 19-րդ դարի կեսերին)։ Ս. Մալխասյանցն իր բառարանում ղեկավարեց հայ բառարանագրության պատ-

18 Н. В. Арутюнян, Новые урартские надписи Кармир-Блур, Ереван, 1966.

19 Г. Б. Джаякян, Урартский и индоевропейские языки, Ереван, 1963.

20 Г. А. Капанцян, Хайаса — колыбель армян, Ереван, 1947.

մության ընթացքում հրապարակ եկած բոլոր բառարանների գործածած բառերը: Ուրեմն նրա բառարանում տեղ են գտել և՛ գրաբար, և՛ բարբառային, և՛ անձանոթ, և՛ անստույգ ու հնարովի, և՛ այլ տեսակ-տեսակ բառեր: Սակայն համապատասխան նշաններով և նշումներով Ս. Մալխասյանցը կողմնորոշում է ընթերցողին: Բոլոր ստույգ բառերի բացատրությունը նա տալիս է սեփական շարագրանքով: Գրաբար նշանակությունների համար օգտագործում է Հայկազյան բառարանը և Հ. Աճառյանի արմատական բառարանը, իսկ աշխարհաբար բառերի կամ բառերի աշխարհաբար նշանակությունները բացատրում է ինքր և ապացույց բերում ինքնահնար օրինակներ: Պիտի ասել, որ բերած օրինակները միշտ դիպուկ են, միանգամայն համապատասխան հեղինակի տված նշանակություններին: Թեև Մալխասյանցի հեղինակային լեզվի մեջ կան հնություններ և նույնիսկ բարբառայնություն (նրա մայրենի բարբառը Կարնո բարբառի Ախալցխայի տարբերակն է), բայց բոլոր բացատրությունները համոզիչ են և գոհացուցիչ: Բառարանում ղետեղված 120 000 բառերից շուրջ 40—45 հազարը ժամանակակից հայերենի բառեր են:

Բավական հաջող տրված են հումանիշները, որովհետև այդ հոմանիշների բառահոգվածներում տրվում են նաև օրինակներ հոմանիշները տարբերակելու համար: Ս. Մալխասյանցի բառարանը մեր բառարանագրական աշխատանքների հանրագիտարանն է: Բառարանից օգտվելը դժվար չէ և, շնորհիվ եղած նշումների, օգտագործողը չի կարող ապակողմնորոշվել: Ս. Մալխասյանցի բառարանը մեր սովետական լեզվաբանության և բառարանագրության խոշոր նվաճումներից մեկն է:

Վերջերս լույս ընծայվեց Ա. Սուքիասյանի հոմանիշների մեծածավալ բառարանը: Տիրոյանի<sup>21</sup> և Գայայանի<sup>22</sup> բառարաններից հետո այդ բառարանը Լրևույթ է մեր լեզվաբանության կյանքում: Հեղինակը կատարել է քրտնաջառ աշխատանք և զանազան բառարաններից հավաքել հոմանիշներ, որոնց ցանկն անցնում է 80 000-ից: Կառուցվածքի տեսակետից այդ բառարանն իր նախորդներից ոչ մի նորությամբ չի տարբերվում, բայց նրանցից տարբեր է նրանով, որ ամփոփում է գրաբարի, ժամանակակից հայերենի, բարբառների և հումանիշների ամբողջությունը: Սովորաբար հոմանիշների բառարանը կազմվում է որևէ գրական լեզվի համար, սակայն հեղինակը ցանկացել է իր բառարանը Ս. Մալխասյանցի բառարանի նման դարձնել հայ հին, նոր. գրաբար, գրական և բարբառային բառապաշարի հանրագիտարան: Մենք շատ մեծ կարիք ունենք ժամանակակից հայերենի հոմանիշների բառարանի՝ մեր արգի պրական լեզուն հարստացնելու և մաքրելու համար: Ուստի, թեև «Հայերենի հոմանիշների բառարանը» արժեքավոր գործ է, բայց մեր գրական լեզվինը չէ: Պետք է արգի հայերենի հոմանիշների մի բառարան կազմել, բայց բոլորովին այլ սկզբունքով, քան կազմված է Ա. Սուքիասյանի բառարանը: Ժամանակակից հայերենի հոմանիշների բառարանը պետք է կազմվի ժամանակակից հայերենի համաբարբառ քարտարանի հիման վրա:

Մեր բառարանագրությունն ունի կազրեր, մեր լեզվաբանների շարքերը խիտ են ու լի ընդունակ աշխատողներով և, եթե գլուխ բերվի Հայկական հա-

21 Հ. Աթանասով. Տիրոյան, Հանրագրություն որ է համազգային գրութեան նոր ոճ մը, Վենետիկ, 1907:

22 Թ. Գայայան (Մխիթար Պոնտացի), Բառարան-գանձարան հայերեն լեզուի, Գահիրէ, 1938:

մարտիրոս քարտարանի գործը, մենք ի վիճակի կլինենք հրատարակելու նաև օրաբար, աշխարհաբար և բարբառային բազմահատոր բացատրական բառարաններ և արդի գրական լեզվի հոմանիշների բառարան՝ գրական հեղինակային վկայություններով: Ուստի մեր լեզվաբանության կարևոր նվաճումներից մեկն էլ համարում ենք Հայկական համարարառ քարտարանի ստեղծումը:

Մեր այդ Քարտարանը կազմվում է առանձին հեղինակների և առանձին հեղինակային գործերի համարարառ քարտարաններ ստեղծելու միջոցով: Առայժմ կազմված են ժամանակակից արևմտահայ և արևելահայ գրական լեզուներով գրող հեղինակների աշխատությունների կեսի համարարառները, մի քանի տարվա աշխատանքը հնարավորություն կտա ունենալու մեր նոր գրականության և սովետական գրականության բոլոր հեղինակների երկերի համարարառ քարտարաններ: Իրանից հետո կկազմվեն երկերի համարարառներ, հեղինակային համարարառներ, հեղինակային հաճախականության բառարաններ, զանազան ժամանակաշրջանների հաճախականության բառարաններ և ժամանակակից հայերեն լեզվի հաճախականության բառարաններ: Այդ ամենը մեր բառարանագրությունը կբարձրացնեն առաջավոր ալգային բառարանագրության համաշխարհային մակարդակին և կհանգիստանան անսպառ աղբյուր նոր ու նոր հետազոտությունների և՛ մաթեմատիկական, և՛ վիճակագրական, և՛ կառուցվածքային, և՛ դասական լեզվաբանության ուղղությունների համար:

Սովետական Հայաստանում կազմվում է նաև ամբողջ գրաբար գրականության համարարառ քարտարանը. աշխատելու մեկ երրորդից ավելին կատարված է: Այդ քարտարանը կծառայի ոչ միայն հեղինակային համարարառներ կամ դարսուշրջանների լեզվի համարարառներ կազմելու գործին, այլև ստույգ և հարուստ աղբյուր կհանգիստանա բանասիրական, պատմագիտական, պատմական աշխարհագրության, գիտության պատմության, տնտեսագիտության պատմության և այլ գիտությունների զարգացման համար:

Հայերենի համարարառ քարտարանը օժանդակեց կազմելու ժամանակակից հայերենի բացատրական բառարանը: Հ. Աճառյանի անվան ինստիտուտի կազմած այդ բառարանը մեծարժեք գործ է և երևույթ կհանգիստանա հայ լեզվաբանության մեջ. սակայն նրա հրատարակությունը, դժբախտաբար, ձգձգվում է:

Սովետական պետությունը տրամադրում է բոլոր հնարավորությունները. պատրաստված են մեծաթիվ կադրեր, և հայոց լեզվի մեծ գանձարանի՝ Հայերենի համարարառ քարտարանի ավարտումն ու օգտագործումը մեր ժողովրդի ժամանակակից լեզվի հարստացման, ինչպես և հասարակական գիտությունների զարգացման համար կստեղծեն աննախընթաց պայմաններ:

Մեր լեզվաբանությունը բավական գործ է կատարել նաև տերմինաբանության բնագավառում: Հրատարակված են բժշկագիտության, մաթեմատիկայի, տեխնիկական, շինարարական գործի, բուսաբանության և մի շարք այլ տերմինաբաններ կամ տերմինների բառարաններ: Պետք է խոստովանվել, որ այդ ուղղությամբ մենք բավական ետ ենք մնում, և դրա հետևանքով ետ է մնում նաև մեր լեզուն, թեև տեխնիկայի, գիտության, արվեստի և այլ բնագավառներում իրապես մենք գտնվում ենք առաջավոր ալգերի շարքերում:

Հայ բառարանագրության բնագավառում մեր խոշոր նվաճումներից մեկը պետք է համարել Ռուս-հայերեն բառահատոր բառարանի կազմումն ու հրա-

տարակուսումը: Այդ գործում մեծ երախտիք ունեն մեր լավագույն բառարանագիրները՝ բան. դիտ. գոկտ., պրոֆեսոր Երվանդ Տեր-Մինասյանը, բան. դիտ. լեզվագետ Մ. Ա. Գևորգյանը, բան. դիտ. գոկտ., պրոֆ. Հ. Ա. Համբարձումյանը (մասնակցել է առաջին երեք հատորները կազմելու աշխատանքներին), Վ. Ա. Փոթեյանը և պրոֆ. Հ. Կ. Կուսիկյանը (մասնակցել է միայն II հատորը կազմելու աշխատանքներին):

Հայ լեզվաբանությունը Սովետական Հայաստանում սատարել է նաև հայոց լեզվի ավանդման գործին: Նախահեղափոխական շրջանում մենք չունեինք սովորաթիվ միջնակարգ դպրոցներ և հայոց լեզվի ավանդման հարցերը ընդգրկվում էին տարրական դպրոցների դասընթացի մեջ. Սովետական շրջանում մեր ժողովրդական լուսավորության գործի կենտրոնական գեմքը դարձավ միջնակարգ դպրոցը, հայոց լեզվի ավանդման հարցերը ավելի բարձր մակարդակի հասուն և ավելի մեծ ծավալ ընդունեցին: Միջնակարգ դպրոցի հայոց լեզվի ծրագիրը ընդգրկում է հայոց լեզվի նորմատիվ քերականությունը, հայոց լեզվի գործուն բառային կազմը համարյա ամբողջությամբ, հետևաբար նաև հայերենի բառակազմության բոլոր հիմնական հարցերը, հայերենի հնչյունաբանությունը, ուղղագրությունը: Սովետական շրջանում մեթոդիկայի առարկայի հարցերը ընդունեցին նոր կերպարանք: Մանկավարժական գիտությունը, ինչպես այդ երևում է 'Ի. էդիլյանի «Լեզվի մեթոդիկա» ուշագրավ աշխատությունից, տարրական դպրոցի լեզվի ուսուցման մեթոդիկային կարող է տիրապետել միայն մոտավոր հնարավորություններով. Բայց ավելի բարձր դաստիարակների հայոց լեզվի հարցերը պահանջում են լեզվաբանական գիտության միջամտությունը, այդ պատճառով էլ Սովետական Հայաստանում (ինչպես Սովետական ամբողջ Միության մեջ) ստեղծվեց լեզվաբանական մի ուղղություն, որ կոչում ենք մանկավարժական լեզվաբանություն: Եթե մեքենայական թարգմանությունը պահանջում է մաթեմատիկական լեզվաբանություն, հաճախական բառարանների կազմելու գործը պահանջում է վիճակագրական լեզվաբանություն, լեզվի պատմության հարցերի պարզաբանումը պահանջում է պատմա-համեմատական լեզվաբանություն, իսկ լեզուների սինխրոնիկ ուսումնասիրության մեծ պահանջն ստեղծեց կառուցվածքային լեզվաբանություն. ապա լեզվի ավանդումը միջնակարգ և բարձրագույն դպրոցներում առաջացրեց մանկավարժական լեզվաբանության ուղղությունը:

Այդ ուղղության մեջ ընդգրկված են լեզվաբաններ, ուսուցիչներ, որոնք լեզվի ավանդման հարցերին նվիրված իրենց աշխատություններում մանկավարժական տեսանկյունով լեզվաբանական հիմնավորումներ են մշակում ավանդվող լեզվի այս կամ այն կարգի, այս կամ այն մակարդակի, այս կամ այն մասնավոր հարցի վերաբերյալ: Երբ հետազոտողին հետաքրքրում են լեզվի երևույթների արտաքին որակը, նրանց հարաբերակցությունը, կառուցվածքային մոդելները, այդ դեպքում պահանջվում է հետազոտել լեզուն կառուցվածքային տեսակետից. որով և պիտանականին հաջողվում է գտնել լեզվի կառուցվածքային օրինաչափությունները: Այստեղ ձևավորվում են կառուցվածքային լեզվաբանության հիմունքները: Բայց երբ գիտնականին հետաքրքրում են լեզվի երևույթի այնպիսի կողմերը, որոնք պիտի օժանդակեն այդ երևույթի յուրացնելուն, այդ դեպքում ուսումնասիրվում են լեզվական երևույթի այնպիսի հատկություններ, որոնք, ստանալով գիտական հիմնավորումներ, ավելի

հեշտ են հաղթահարվում և դյուրութեամբ ըմբռնել տալիս երևույթը. այդ դեպքում լեզվի հարցերով զբաղվում է մանկավարժական լեզվաբանությունը:

Մանկավարժական լեզվաբանությունը լեզուն ուսումնասիրում է միմիային լիմացողի՝ սովորողի շահերից ելնելով և սահմանում օրինաչափություններ, որոնք նպաստում են լեզուն յուրացնելու կամ սովորելու գործին: Այդ տեսակետից մեծ դեր են կատարել մեր մանկավարժական պարբերականները (դրպրոցական թերթ, մանկավարժական ամսագիր, մեթոդական ժողովածուներ) և մեթոդական առանձին աշխատությունները:

Մանկավարժական լեզվաբանությունը ամենամասնական գիտությունն է այժմ, և բազալերելի է նրա լայն զարգացումը: Եւ կօզնի լեզվաբանական բոլոր ուղղությունների կարևոր և մատչելի նվաճումները ներդնել դպրոցներում, դարձնել համաժողովրդական սեփականություն և բարձրացնել մեր լեզվի էությունը:

Այսպիսով, սովետական շրջանում հայ լեզվաբանությունը ունեցավ իր փայլուն ներկայացուցիչները, որոնք մշակեցին բազմաթիվ պրոբլեմներ: Հայտնի լեզվի հետազոտությունները ծավալվեցին ըստ խորության և բարձրացան նոր մակարդակի վրա: Լեզվաբանությունը Սովետական Հայաստանում կանգնած է զարգացման լայն ճանապարհի վրա: Սովետական շրջանի հայ լեզվաբանությունը դարձել է հայրենական գիտություն, համազգային գիտություն. նրա բազմաթիվ ներկայացուցիչները մեղվաջանությամբ քննում են հայոց լեզվի բոլոր հարցերը՝ քայլելով այդ գիտության առաջավոր ուղիներով: Պետք է առանձնապես ընդգծել եղբայրական Ռուսաստանի լեզվաբանության դերը մեր լեզվաբանության ծավալման և զարգացման գործում:

Սովետական շրջանը հայ ժողովրդի, հայ գիտության ու կուլտուրայի, ալլև հայ լեզվաբանության և հայոց լեզվի ծաղկման ու զարգացման նոր շրջան է:

Գծվար է մի հողվածում ընդգրկել այն մեծ նվաճումները, որ հայոց լեզուն ունեցել է սովետական շրջանում, բայց մեր այս խիստ համառոտ շարադրանքից պարզ է, որ մեր լեզվաբանության զարգացումն անցել է մեծ ուղի ունի շատ մեծ նվաճումներ և է՛լ ավելի մեծ գալիք: Դրա երաշխիքն են մեր սովետական հայրենիքը, հայրենի սովետական պետությունը և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության դարաշրջան ստեղծող նվաճումներն ու աշխարհածավալ երթը:

Հողվածի հեղինակ ակադեմիկոս Ա. Նարեկյանը իր մասին ոչինչ չի գրել, մինչդեռ հայտնի է, որ նա խոշոր ծառայություն ունի սովետահայ լեզվաբանության զարգացման գործում. — կոմր.: